ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2020թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

2009 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԽԻՎՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով և «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. 2009 թվականից մինչև 2013 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում պահպանվող, Երևան համայնքի սեփականություն համարվող սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով նշված արխիվային փաստաթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

1) Երևանի քաղաքապետի 2009-2013թթ. մշտական պահպանության որոշումներ.

2) աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի 2009-2013թթ. մշտական պահպանության ակտեր.

3) աշխատակազմի հանրակրթության վարչության 2009-2013թթ. երկարաժամկետ պահպանության փաստաթղթեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«2009 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԽԻՎՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում ներկայումս պահպանվում են 2009 թվականից Երևան համայնքի, ինչպես նաև 1968 թվականից պետական սեփականություն համարվող մշտական և երկարաժամկետ պահպանության բազմաթիվ արխիվային փաստաթղթեր, որոնք զբաղեցնում են արխիվային պահոցների զգալի մասը և հնարավոր չէ ընդունել արխիվացման ենթակա նոր փաստաթղթեր:

ՀՀ կառավարության 04.04.2019թ. հ.397-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ Ազգային արխիվի փորձագիտական հանձնաժողովի և Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատվել են նշված մշտական և երկարաժամկետ փաստաթղթերի ցանկերը՝

1) Երևանի քաղաքապետի 2009-2013թթ. մշտական պահպանության որոշումներ.

2) աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի 2009-2013թթ. մշտական պահպանության ակտեր.

3) աշխատակազմի հանրակրթության վարչության 2009-2013թթ. երկարաժամկետ պահպանության փաստաթղթեր:

«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին որոշում է համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

Տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում պահպանվող, 2009-2013թթ. ներառյալ ժամանակահատվածում առաջացած (Երևանի քաղաքապետի մշտական պահպանության որոշումներ, աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի մշտական պահպանության ակտեր և աշխատակազմի հանրակրթության վարչության երկարատև պահպանության փաստաթղթեր), Երևան համայնքի սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը առաջարկվում է փոխանցել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ վերոնշված փաստաթղթերի հաշվառման և օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու և արխիվային պահոցը նոր փաստաթղթերով համալրելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«2009 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԽԻՎՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «2009 թվականից մինչեվ 2013 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում պահպանվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող որոշ արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«2009 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԽԻՎՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ, ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «2009 թվականից մինչեվ 2013 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում պահպանվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող որոշ արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականության փոխանցելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**